

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 1995 թ. թիվ 15

ԱՊՈՍՏԻԼ ԴՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1993 թվականի մայիսի 24-ի "Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին Հաագայի 1961 թվականի հոկտեմբերի 5-ի կոնվենցիային միանալու մասին" որոշումից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. "Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին" Հաագայի 1961 թվականի հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի առաջին հոդվածով նախատեսված փաստաթղթերի վրա ապոստիլ (հավաստող մակագրություն) դնելու պետական լիազորված մարմիններ նշանակել՝

ա) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ հանրապետության ժողովրդական դատարանների կողմից կայացված դատավճիռների, վճիռների, որոշումների կատարողական փաստաթղթերի, ինչպես նաև նոտարական կարգով հաստատված եւ քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ կազմված փաստաթղթերի վրա.

բ) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը՝ մնացած բոլոր փաստաթղթերի վրա:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը՝ 10-օրյա ժամկետում սույն որոշմամբ ապոստիլ դնելու իրավունք ունեցող պետական լիազորված մարմինների նշանակման մասին սահմանված կարգով տեղյակ պահել Նիդեռլանդների Թագավորության արտաքին գործերի նախարարությանը: